

Այս դասի (մոտիվացնող ներածական տեսանյութ+դասի տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար հարկավոր է մինչև **4 ժամ**:

ԴԱՍ 7 ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ

(հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռուստուցման բաժնում և հեռուստուցման փաթեթի կրիչում)

Նախորդ դասում մենք սկսեցինք ուսումնասիրել փախստականների պաշտպանության հիմնական սկզբունքները: Մասնավորապես, Ձեզ ներկայացրեցինք չվերադարձելիության սկզբունքը և դրա հետ կապված փախստականների վտարման հարցը:

Այս դասում Ձեզ կներկայացնենք փախստականների պաշտպանության մյուս սկզբունքները՝

- ապաստանի սկզբունքը
- խտրականության արգելքը
- անօրինական մուտքի և կացության պատժելիության արգելքը
- երկիրը լքելու իրավունքը

Ցուցումներ



Մինչև 5 րոպե

Ուշադրությամբ կարդացեք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցեք ինքնաստուգիչ հարցերին:



Մինչև 205 րոպե

- ընտանիքի միասնականության սկզբունքը
- երկարատև լուծումների և միջազգային համագործակցության սկզբունքները:

Ապաստանի սկզբունքը

1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածը սահմանել է յուրաքանչյուր անձի՝ հետապնդումից այլ երկրներում ապաստան փնտրելու և այդ ապաստանից օգտվելու իրավունքը (ապաստանի իրավունք): 1951 թ. Կոնվենցիան այս իրավունքի երաշխավորման կարևորագույն գործոնն է, իսկ ապաստանի իրավունքն, իր հերթին, փախստականների միջազգային իրավունքի առանցքային սկզբունք է:

Կարևոր է հաշվի առնել, որ ապաստանի իրավունքի կիրառման շրջանակը ավելի լայն է, քան 1951 թ. Կոնվենցիայով նախատեսված պաշտպանությունը, քանի որ կիրառվում է հետապնդումների ենթարկվող անձանց նկատմամբ նաև այն դեպքում, երբ հետապնդումը պայմանավորված չէ համապատասխան պատկանելությամբ կամ հայացքներով: Ուստի հենց ապաստանի իրավունքն է 1951 թ. Կոնվենցիայի ներառման պայմաններին չհամապատասխանող անձանց կոմպլեմենտար պաշտպանություն տրամադրելու հիմքը:

Մյուս կողմից, ինչպես վկայում են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի travaux préparatoires-ները (նախապատրաստական աշխատանքները), ապաստանի իրավունքն ինքնաբերաբար չի ենթադրում ապաստան տրամադրելու պետությունների

Փորձեք բերել պետությունների՝ ապաստան

պարտավորություն¹:

Այս առնչությամբ որոշ մասնագետներ պնդում են, որ քանի դեռ պետությունն ինքնիշխան որոշման համաձայն անձին չի տրամադրել փախստականի կարգավիճակ ու ապաստան, միջազգային իրավունքում ապաստան ստանալու իրավունքի շրջանակներում պետությանը կաշկանդում է բացառապես փախստականների վտարման արգելքն ու չվերադարձելիության սկզբունքը: Սակայն այս պարտավորությունների պատշաճ կատարումն անխուսափելիորեն ենթադրում է, որ մինչ անձին ապաստան տրամադրելու կամ նրան վտարելու կամ վերադարձնելու որոշում կայացնելը, պետությունը պետք է նրան տրամադրի ապաստան, որի շրջանակներում այդ անձին պետք է երաշխավորվի ոչ միայն պաշտպանություն չվերադարձելիության սկզբունքի շրջանակներում, այլև ապահովվի նրա անձնական ազատությունը և 1951 թ. Կոնվենցիայի 31-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները²: Ընդ որում, թեև 1951 թ. Կոնվենցիայով նախատեսված այլ երաշխիքները կիրառելի են միայն փախստականի կարգավիճակ ստացած անձանց նկատմամբ, սակայն մինչ այդ պահը համապատասխան անձանց վրա ինքնաբերաբար կտարածվեն մարդու իրավունքների միջազգային իրավունքների բոլոր երաշխիքները՝ բացառությամբ հատկապես քաղաքացիների համար երաշխավորվածների: «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավական երաշխիքների զգալի մասը՝ համահունչ այս մոտեցմանը, կիրառելի է նաև ապաստան հայցող անձանց նկատմամբ:

տրամադրելու որոշ հիմքեր:

Դաս 6-ից վերհիշեք, թե ինչ է վերադարձելիության սկզբունքը:

¹ R. Plender and N. Mole, 'Beyond the Geneva Convention: constructing a de facto right of asylum from international human rights instruments', in F. Nicholson and P. Twomey (eds.), *Refugee Rights and Realities: Evolving International Concepts and Regimes*, (Cambridge University Press, 1999) 81, p. 8.
² C.L.C. Mubanga-Chipoya, *Final Report, The Right of Everyone to Leave any Country, including His Own, and to Return to His Country*, UN doc. E/C.4/Sub.2/1988/35, June 1988, at 103–6.

Խտրականության արգելքը

1951 թ. Կոնվենցիայի 3-րդ հոդվածը սահմանում է, որ Կոնվենցիայի դրույթները փախստականների նկատմամբ կիրառվում են առանց ռասայի, կրոնի կամ ծագման երկրի հիմքով խտրականության: Մարդու իրավունքների միջազգային կոնվենցիոն և սովորույթային նորմերի համաձայն՝ առհասարակ արգելվում է խտրականությունը նաև մաշկի գույնի, սեռի, լեզվի կամ սոցիալական ծագման հիմքով (ընդ որում՝ առանձին միջազգային պայմանագրեր նախատեսում են նաև այլ հիմքեր): Սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Մարդու իրավունքների կոմիտեի և այլ միջազգային մարմինների որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ որևէ այլ հիմքով (օրինակ՝ քաղաքացիության, տարիքի և այլն) անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքը խախտում է խտրականության արգելքը, եթե այն հիմնված չէ օբյեկտիվ և ողջամիտ հիմքերի վրա³: Այս առումով հարկ է հաշվի առնել, որ միջազգային իրավունքը չի արգելում այսպես կոչված «դրական խտրականությունը»՝ ժամանակավոր միջոցներ, որոնց շրջանակներում տարբերակված դրական մոտեցում է ցուցաբերվում խտրականությունից տուժած խմբերի հանդեպ՝ խտրականությունը հաղթահարելու համար⁴:

Նկարագրեք, թե ինչ է «դրական խտրականությունը»:

Անօրինական մուտքի և կացության պատժելիության արգելքը

1951 թ. Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին մասն արգելում է փախստականների նկատմամբ պատժամիջոցներ

³ *Gaygusuz v. Austria* (Judgment), App. No. 17371/90, 1996-IV Eur. Ct. H.R. § 42; U.N. Comm. on the Elimination of Racial Discrimination, Gen. Recommendation No. 30: Discrimination Against Non-Citizens, U.N. Doc. CERD/C/64/Misc.11/rev.3 (2004). HRC, General Comment No. 15 (1986), UN Doc HRI/GEN/1/Rev.9 (Vol I), §§ 2, 7; CERD General Recommendation No 30 (2004), CERD/C/64/Misc.11/rev.3 § 18; Paul Hoffman, *Human Rights and Terrorism*, Human Rights Quarterly, Volume 26, p. 932, November 2004, p. 942.

⁴ Տե՛ս, օրինակ, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1979 թ. Կոնվենցիա, հ. 4:

կիրառել ապօրինի կերպով երկիր մուտք գործելու կամ այնտեղ գտնվելու համար՝ պայմանով, որ նրանք, ուղղակիորեն գալով այն տարածքից, որտեղ 1-ին հոդվածի իմաստով վտանգվում էր նրանց կյանքը կամ ազատությունը, անձամբ, առանց ձգձգման, ներկայանան իշխանություններին և նշեն իրենց ապօրինի մուտքի կամ գտնվելու հիմնավոր պատճառ: Նշված հոդվածի 2-րդ մասը նման փախստականների տեղաշարժի նկատմամբ թույլատրում է կիրառել միայն խիստ անհրաժեշտ սահմանափակումներ՝ պայմանով, որ դրանք, ամեն դեպքում, կիրառվեն միայն մինչև տվյալ երկրում նրանց կարգավիճակի կարգավորումը կամ մեկ այլ երկիր մուտք գործելու թույլտվություն ստանալը: Այս սկզբունքը կիրառվում է ոչ միայն փախստական ճանաչված անձանց նկատմամբ (որոնք նման ճանաչման ուժով ունեն երկրում գտնվելու իրավունք), այլև Կոնվենցիայի ներառման պայմաններին բավարարող բոլոր անձանց նկատմամբ⁵:

31-րդ հոդվածի 1-ին մասում հստակեցման կարիք ունեն **«պատժամիջոցներ»**, **«ուղղակիորեն»** և **«հիմնավոր պատճառ»** եզրերը: Ըստ Կոնվենցիայի մեկնաբանությունների՝ **«ուղղակիորեն»** եզրը պարտադիր չի ենթադրում, որ փախստականը պետք է համապատասխան երկրի տարածք մուտք գործած լինի *անմիջապես* հետապնդումների երկրի տարածքից: Եթե նա անցել է բացառապես այնպիսի երրորդ երկրներով, որտեղ նրա կյանքին և ազատությանը վտանգ էր սպառնում կամ որոնք հրաժարվել են նրան տրամադրել պաշտպանություն ու ապաստան (կամ ակնհայտորեն կմերժեին, օրինակ՝ բացառման պայմանների առկայության հիմքով), ապա նա պետք է համարվի ուղղակիորեն եկած համապատասխան տարածքից (որտեղ նրա կյանքը կամ

Փորձեք հստակեցնել նշված եզրերը:

⁵ The Scope and Content of the Principle of Non-Refoulement, Opinion, E. Lauterpacht, D. Bethlehem, Cambridge University Press, 2003, § 93.

ազատությունը վտանգվում էր)⁶: Ինչ վերաբերում է «պատժամիջոցներ» եզրին՝ համաձայն Կոնվենցիայի travaux préparatoires-ների՝ դրանք ներառում են ինչպես քրեական, այնպես էլ վարչական պատասխանատվության միջոցները, սակայն չեն բացառում անձին ձերբակալելու հնարավորությունը (օրինակ՝ ճշտելու համար, արդյո՞ք մուտքն ուղղակիորեն եղել է հետապնդումների երկրի տարածքից և անօրինական է հիմնավոր պատճառով)՝ ողջամիտ ժամկետում ձերբակալության օրինականությունը իրավասու դատարանի քննությանը ներկայացնելու պայմանով⁷: Եվ վերջապես, «հիմնավոր պատճառով» եզրույթը պետք է մեկնաբանվի առավել լայն: Հետապնդումներից փախչելն ինքնին երկրի տարածք մուտք գործելու և այնտեղ մնալու հիմնավոր պատճառ է, սակայն անձը կարող է ներկայացնել նաև այլ ողջամիտ պատճառներ:

Բերեք ողջամիտ պատճառի օրինակներ:

Քանի որ ՀՀ քրեական օրենսգիրքը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը փախստականների պարագայում չեն նախատեսում որևէ բացառություն անօրինական մուտքի կամ կացության համար՝ Կոնվենցիայի համապատասխան դրույթի պահպանման անհրաժեշտությունը ենթադրում է հնարավորության սահմաններում քննարկվող դրույթի ուղղակի կիրառում:

**Ընտանիքի միասնականության սկզբունքը
(իրավունքը)**

Թեև ընտանիքի միասնականության սկզբունքն անմիջապես ամրագրված չէ 1951 թ. Կոնվենցիայում, սակայն

⁶ Cambridge University Press, *Article 31 of the 1951 Convention Relating to the Status of Refugees: Non-Penalization, Detention, and Protection*, June 2003, available at: <http://www.refworld.org/docid/470a33b10.html> [accessed 20 June 2016], § 29.
⁷ Տե՛ս նույնը, § 30, ինչպես նաև տե՛ս HRC General Comment No. 35, CCPR/C/GC/35, § 15, *Brannigan and McBride v. UK*, ECtHR, Judgment (1993), § 28.

այն ուղղակիորեն բխում է միջազգային իրավունքում ընտանիքի իրավունքի և ընտանիքի՝ որպես հասարակության հիմնական բջջի ճանաչումից, և հանդիսանում է փախստականների միջազգային իրավունքի սկզբունք և փախստականների հիմնարար իրավունք⁸: Այս սկզբունքը կիրառվում է առաջին հերթին ամուսինների, երեխաների ու ծնողների նկատմամբ, սակայն կիրառելի է նաև անձի խնամքի տակ գտնվող այլ բարեկամների նկատմամբ:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը ընտանիքի միասնականության սկզբունքի կիրառումը պայմանավորում է բարեկամների՝ փախստականի քաղաքացիությունից տարբերվող արդյունավետ պաշտպանություն տրամադրող որևէ այլ երկրի քաղաքացիություն չունենալու հետ: Սակայն, համաձայն միջազգային իրավունքի, պետությունը պետք է թույլատրի ընտանիքի միասին ապրելը կամ վերամիավորումը բոլոր այն դեպքերում, երբ ընտանիքը չունի այլ երկրում ընտանիքի միասնականությունից օգտվելու ողջամիտ հնարավորություն⁹: Ուստի, օրենքի նշված պահանջները պետք է մեկնաբանել հնարավորինս լայն՝ համահունչ ընտանիքի միասնականության սկզբունքի բովանդակությանը:

Երկիրը լքելու իրավունքը

Ինչպես և ընտանիքի միասնականություն սկզբունքը, երկիրը լքելու իրավունքը բխում է մարդու իրավունքների միջազգային իրավունքի նորմերից: Այս իրավունքի շրջանակներում յուրաքանչյուր ոք, այդ թվում՝

⁸ K. Jastram and K. Newland, ‘Family Unity and Refugee Protection’, in E. Feller, V. Türk, and F. Nicholson (eds), *Refugee Protection in International Law: UNHCR’s Global Consultations on International Protection* (Cambridge: Cambridge University Press, 2003), pp. 557-559.
⁹ UNHCR, ‘Global Consultations on International Protection, Geneva Expert Round Table’, 8–9 November 2001.

փախստականները, ազատ են լքելու իրենց բնակության երկիրը: Երկիրը լքելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքի հիման վրա այն բացառիկ դեպքերում, երբ դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ազգային անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության կամ էլ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար¹⁰: Միաժամանակ հարկ է հաշվի առնել, որ գործնականում այս իրավունքի իրագործումը կախված է այլ երկրներ մուտք գործելու իրավունքից, որը միջազգային իրավունքում չի երաշխավորվում:

Երկարատև լուծումների և միջազգային համագործակցության սկզբունքները

Երկարատև լուծումների և միջազգային համագործակցության սկզբունքների կիրառման հավանականությունը բավականին ցածր է վարչարարության, վարչական վարույթի կամ վարչական գործերով քննության շրջանակներում: Ուստի կսահմանափակվենք բացառապես դրանց էությունը ներկայացնելով:

Երկարատև լուծումների սկզբունքն արտահայտում է փախստականների միջազգային իրավունքի հիմնական նպատակներից մեկը՝ ինտեգրացիայի, վերաբնակեցման կամ կամավոր վերադարձի միջոցով փախստականի խնդիրների վերջնական լուծումն ապահովելը:

Միջազգային համագործակցության սկզբունքը ենթադրում է, որ պետությունները պետք է համագործակցեն

Փորձեք նկարագրել, թե ինչպես կարող է կարգավորվել պետությունների

¹⁰ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թ. Դաշնագիր, հ. 12, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 4 Արձանագրություն, 1963 թ., հ. 2:

փախստականների խնդիրների լուծման նպատակով, սակայն միջազգային իրավունքում առ այսօր չկա հստակ կոնսենսուս այս սկզբունքի շրջանակներում պետությունների կոնկրետ պարտավորությունների շրջանակի վերաբերյալ:

համագործակցությունը փախստականների խնդիրների լուծման նպատակով:

Այսպիսով, այս դասում Ձեզ ներկայացրեցինք՝

- ապաստանի սկզբունքը
- խտրականության արգելքը
- անօրինական մուտքի և կացության պատժելիության արգելքը
- երկիրը լքելու իրավունքը
- ընտանիքի միասնականության սկզբունքը
- երկարատև լուծումների և միջազգային համագործակցության սկզբունքները:

Հաջորդ դասում կքննարկենք փախստականի կարգավիճակի և ապաստանի հայցման ընթացակարգային կարգավորումները՝ սահմանված ներպետական օրենսդրությամբ, և այդ ընթացակարգերի արդյունավետությունն ապահովող օրենսդրական երաշխիքները:

Նշումների համար՝

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

ԲԱՌԱՐԱՆ

Ապաստանի իրավունք – Յուրաքանչյուր անձի՝ հետապնդումից այլ երկրներում ապաստան փնտրելու և այդ ապաստանից օգտվելու իրավունքն (ապաստանի իրավունք) է՝ սահմանված 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածով:

Խտրականություն – Մարդու իրավունքների միջազգային իրավունքում խտրականության առավել ընդունված սահմանումը տրվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքի կոմիտեի կողմից 1989 թ. թիվ 18 ընդհանուր մեկնաբանությունում (General Comment No. 18: “Non-discrimination”, HRI/GEN/1/Rev.4, 1989), ըստ որի խտրականություն է ցանկացած տարբերակումը, բացառումը, սահմանափակումը կամ արտոնությունը, որը հիմնված է որոշակի նույնականացվող հիմքերի վրա, և որի նպատակը կամ արդյունքն է այն, որ վերացվում կամ վնասվում է բոլոր անձանց ազատությունների կամ իրավունքների ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը հավասար պայմաններով:



Ցուցումներ

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:



Մինչև 10 րոպե

1. Edwards A., Human Rights, Refugees, and The Right 'To Enjoy' Asylum. Oxford University Press, 2005 // www.ijrl.oupjournals.org
2. Goodwin-Gill G. S., Article 31 of the 1951 Convention relating to the Status of Refugees: Non-penalization, Detention and Protection. 2001.
3. General Comments Adopted by The Human Rights Committee Under Article 40, Paragraph 4, of The International Covenant On Civil and Political Rights. 02.11.99.
4. Declaration on Territorial Asylum, G.A. res. 2312 (XXII), 22 U.N. GAOR Supp. (No. 16) at 81, U.N. Doc. A/6716 (1967).
5. Summary Conclusions on Family Unity // Geneva Expert Roundtable, 8-9 November, 2001.
6. Hathaway J. C., Neve R. A., Making Nternational Refugee Law Relevant Again: A Proposal For Collectivized and Solution-Oriented Protection // Harvard Human Rights Journal, Spring, 1997.
7. Jastram K., Newland K., Family Unity and Refugee Protection // Final Act, 1951 UN Conference.



Ցուցումներ

Լրացուցիչ մեդիա-նյութերը նախատեսված են Ձեզ հետաքրքրող նյութի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար: